Արձանագրություն 3

«ՀՀԿԳՆԳՀԱՊՁԲ-19/5» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգով ամսագրերի գնման գործընթացի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

28.03.19թ.
ժ.11:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Գ. Մամիկոնյան /գնահատող/
Հանձնաժողովի անդամներ՝ Թ. Գյոզալյան /գնահատող/
Ա. Բաղդասարյան /գնահատող/
Ա. Բարսեղյան /բացող/
Ա. Գևորգյան /բացող/
Հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Մարգարյան

1. Որակավորման փաստաթղթերի ներկայացման մասին

(Գ. Մամիկոնյան)

1.1 <<Ոսկի Խատուտիկ>> ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում ներկայացվել են 1-ին չափաբաժնի մասով որակավորումը հիմնավորող փաստաթղթերը:

1.2 <<Մարի հրատարակչություն>> ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում ներկայացվել են 2-րդ չափաբաժնի մասով որակավորումը հիմնավորող փաստաթղթերը:

1.3 ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեից ստացվել են <<Ոսկի Խատուտիկ>> ՍՊԸ-ի և <<Մարի հրատարակչություն>> ՍՊԸ-ի վերաբերյալ համապատասխան եզրակացությունները:

2. Որակավորման փաստաթղթերի գնահատման ընթացքում արձանագրված անհամապատասխանությունների մասին

(Գ. Մամիկոնյան)

2.1 <<Ոսկի Խատուտիկ>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրման արդյունքում արձանագրվեցին հետևյալ անհամապատասխանությունները.

- Ներկայացված թիվ 6.1 հավելվածը չի համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին՝ մասնավորապես, տեխնիկական բնութագիրը ներկայացվել է ոչ լիարժեք:
- Ներկայացված ՀՀ կրթության և գիտության նախարարության հետ կնքված 04.02.2016թ թիվ U04/2016, 06.02.2016թ թիվ U04/2017 և 06.02.2018թ թիվ U04/2018 պայմանագրերին կից ներկայացված հաշիվ-ապրանքագրերը չեն պարունակում պահանջվող անհրաժեշտ տեղեկատվությունը, ինչը հնարավորություն չի տալիս դրանք գնահատելու համար: Չեն ներկայացվել նաև նշված պայմանագրերի կողմերի հաստատած՝ պայմանագրերի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտերի /հանձման-ընդունման ակտերի/ պատճեները կամ տվյալ պայմանագրերի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը:

Ընդունվել է որոշում՝ 5 կողմ , դեմ 0:

2.2 <<Մարի հրատարակչություն>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրման արդյունքում արձանագրվեց հետևյալ անհամապատասխանությունը.

- Ներկայացված թիվ 6.1 հավելվածը չի համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին՝ մասնավորապես, տեխնիկական բնութագիրը ներկայացվել է ոչ լիարժեք:

Ընդունվել է որոշում՝ 5 կողմ , դեմ 0:

2.3 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ թիվ 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 47-րդ կետը կասեցնել գնահատման գործընթացը և առաջարկել <<Ոսկի Խատուտիկ>> ՍՊԸ-ին և <<Մարի հրատարակչություն>> ՍՊԸ-ին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

Ընդունվել է որոշում՝ 5 կողմ , դեմ 0:

3. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման ժամանակացույցը հաստատելու մասին
(Գ. Մամիկոնյան)

3.1 Հանձնաժողովի հաջորդ նիստը կազմակերպել մասնակիցների կողմից շտկված փաստաթղթերը ներկայացվելուն հաջորդող օրը ժամը 15:30-ին, ՀՀ կրթության և գիտության նախարարություն, Վ. Սարգսյան 3, Կառավարական տուն 2, 3-րդ հարկ, 303 սենյակ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 03.04.2019թ. ժամը 15:30-ին

Հանձնաժողովի նախագահ՝	Գ. Մամիկոնյան /գնահատող/
Հանձնաժողովի անդամներ՝	Թ. Գյոզալյան /գնահատող/
	Ա. Բաղդասարյան /գնահատող/
	Ա. Բարսեղյան /բացող/
	Ա. Գևորգյան /բացող/
Հանձնաժողովի քարտուղար՝	Ա. Մարգարյան

4. Գնման գործընթացի գնահատման ընթացքում արձանագրված անհամապատասխանությունների շտկման մասին

4.1 <<Ոսկի Խատուտիկ>> ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում շտկվել են արձանագրված անհամապատասխանությունները:

4.2 <<Մարի հրատարակչություն>> ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում շտկվել է արձանագրված անհամապատասխանությունը:

4.3 Հիմք ընդունելով հանձնաժողովի կողմից ներկայացված գնահատման թերթիկները <<Ոսկի Խատուտիկ>> ՍՊԸ-ի և <<Մարի հրատարակչություն>> ՍՊԸ-ի հայտերը գնահատել բավարար և հայտարարել 1-ին տեղ զբաղեցնող /ընտրված մասնակից/ <<Ոսկի Խատուտիկ>> ՍՊԸ-ին 1-ին չափաբաժնի մասով, <<Մարի հրատարակչություն>> ՍՊԸ-ին 2-րդ չափաբաժնի մասով:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

4.4 Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը՝ ըստ որի <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն անգործության ժամկետ սահմանել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 5-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

4.5 Ընտրված մասնակիցներին, անգործության ժամկետի ավարտից հետո, էլեկտրոնային ձևով գնումների կազմակերպման կարգին համապատասխան՝ ARMEPS համակարգով, ներկայացնել պայմանագիր կնքելու առաջարկ:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

Գնահատող հանձնաժողով՝

_____ Գ. Մամիկոնյան /նախագահ/

_____ Թ. Գյոզալյան

_____ Ա. Բաղդասարյան

_____ Ա. Բարսեղյան

_____ Ա. Գևորգյան

_____ Ա. Մարգարյան /քարտուղար/